ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 հոկտեմբերի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

136
(2986)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱԺ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՄՄԽՎՈՒՄ ԵՆ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԿԱՏԱՐՎՈՒՄ

Պոզով-պոչով կոռուպցիան ՀՀ Ազգային ժողովում բույն է դրել ու զարգանում է: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից պարզեց, որ ԱԺ «Ամառային դպրոցի» շրջանակում նախապես պլանավորել են խարույկի շուրջ զրույց կազմակերպել ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եւ աշակերտների միջեւ: Պետբյուջեի միջոցներից վարձակալել են պուֆեր (փափկաթոռներ) եւ այլ պարագաներ, սակայն միջոցառումը չի կայացել. իսկ «Ամառային դպրոցի» կազմակերպումը ԱԺ աշխատակազմի ղեկավարը վստահել է Երեւանի քաղաքապետարանին ավտոմեքենայի մաս վաճառած ընկերությանը:

«Ամառային դպրոցի» անցկացման համար Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը պայմանագիր է կնքել «Լոռե թրավել» ՍՊԸ-ի հետ, որն արժեցել է 22 մլն 80 հազար դրամ՝ գրեթե 56 հազար դոլար, որով սահմանված են եղել հստակ պահանջներ: Նկատենք՝ «Լոռե թրավել» ՍՊԸ-ն, կարծես թե, իշխանության սիրելի մատակարարներից մեկն է: ՍՊԸ-ն 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կնքել է 6 պայմանագիր Երեւանի քաղաքապետարանի, ՀՀ վիճակագրական կոմիտեի, Ազգային ժողովի եւ «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի հետ, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 45 մլն դրամ: Ընկերությունն իշխանություններին հիմնականում միջոցառման կազմակերպման ծառայություններ է մատուցում:

«Լոռե թրավել» ՍՊԸ-ն պատկանում է տնտեսական գործունեության «ցամաքային այլ մարդատար տրանսպորտի գործունեություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում» դասիչին: Տնտեսական գործունեության տեսակը չի ենթադրում սեմինարների կազմակերպման ծառայություններ, գուցե սա ՊԵԿ-ի կողմից բացթողում է, կամ ոչ:

Ինչեւէ, «Լոռե թրավել» ՍՊԸ-ն, պարզվում է, նաեւ մեքենաների մասերի վաճառքով է զբաղվում: 2024 թվականի հունիսի 12-ին մեկ անձից գնման եղանակով Երեւանի քաղաքապետարանը նշված ընկերությունից ձեռք է բերել ավտոմասեր: ***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

4-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովը ԱԺ կանոնակարգի շատ դրույթների խախտումով վերջապես ավարտել է աշխատանքները, եզրակացությունն արդեն պատրաստ է: «Ժողովուրդ» օրաթերթին ՔՊ-ից հայտնեցին, որ զեկույցը հիմա վերջնական ամփոփման փուլում է, սպասում են հանձնաժողովի անդամների հատուկ կարծիքներին, եթե իհարկե, այդպիսիք լինեն: ԱԺ կանոնակարգ օրենքի 25-րդ հոդվածը սահմանում է՝ եթե քննիչ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդը զեկույցի վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա նրանց ներկայացուցիչը կարող է Ազգային ժողովի նիստում՝ զեկույցի քննարկման ընթացքում, հանդես գալ հարակից զեկուցմամբ՝ներկայացնելով հատուկ կարծիքը: Արդեն այս ամիս՝ հոկտեմբերին, քննիչ հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը պետք է նամակով դիմի ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին, որպեսզի վերջինս դռնփակ նիստ նախաձեռնի քննիչ հանձնաժողովի զեկույցը ներկայացնելու համար: ԱԺ կանոնակարգի համաձայն՝ զեկույցն Ազգային ժողովի նախագահին ներկայացվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստում: Հարցը քննարկվում է հետեւյալ կարգով. նախ հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս քննիչ հանձնաժողովի նախագահը՝ներկայացնելով հանձնաժողովի զեկույցը, որից հետո նրան կարող են հարցեր տրվել: Սրան հաջորդում է մտքերի փոխանակություն, այնուհետեւ եզրափակիչ ելույթով հանդես է գալիս քննիչ հանձնաժողովի նախագահը: Հարցի քննարկումն ավարտվելուց հետո քննիչ հանձնաժողովի զեկույցը, ինչպես նաեւ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ներկայացված հատուկ կարծիքն աշխատակարգով սահմանված կարգով ուղարկվում է զեկույցում նշված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց, որոնք կարող են զեկույցի վերաբերյալ իրենց գրավոր պատասխանն Ազգային ժողովի նախագահին ուղարկել մեկամսյա ժամկետում:



Գլխավոր դատախազության եւ Երգիչ Հայկ Ղեւոնդյանի՝ Սպիտակցի Հայկոյի որդու միջեւ պայքարը չի դադարում: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Գլխավոր դատախազությունը մերժել է հայտնի երգչի որդու՝ Հրաչյա Ղեւոնդյանի պաշտպանների միջնորդությունը՝ վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասով: Ասել է թե՝ Սպիտակցի Հայկոյի որդին շարունակում է իշխանության յուրացման գործով անցնել մեղադրյալի կարգավիճակով: Ինչպես ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր, Սպիտակցի Հայկոյի որդու կալանավորման հարցը հասել էր Վճռաբեկ դատարան: ArmLur.am-ին հայտնի էր դարձել, որ Գլխավոր դատախազությունը դիմել էր վճռաբեկ դատարան՝ պահանջելով բեկանել ՀՀ վերաքննիչ դատարանի որոշումը, սակայն Վճռաբեկ դատարանը մերժել էր Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին: Ասել է թե՝ ՀՀ բոլոր դատական ատյանները՝ առաջին ատյանը, ՀՀ վերաքննիչ ու Վճռաբեկ դատարանները, մերժել էին հայտնի երգչի որդուն կալանավորելու միջնորդություններն ու բողոքները: ArmLur.am-ը գրել էր, որ ՀՀ գլխավոր դատախազությունը խիստ է տրամադրված եւ ամեն գնով ցանկանում է կալանքի տանել Հրաչյա Ղեւոնդյանին, սակայն փորձերն անցան ապարդյուն: Դատարանները կալանքի չտարան, սակայն քրեական հետապնդումը դադարեցնելը մերժվեց: ***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***

«Աթենք» ՍՊԸ-ն հերթական անգամ դատարանի դռներն է ընկել: Մեզ հայտնի դարձավ, որ ընկերությունը սեպտեմբերի 20-ին վարչական դատարան հայց է ներկայացրել՝ ընդդեմ ՀՀ առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի՝ պահանջելով անվավեր ճանաչել կարգադրությունը: Նշենք, որ տեսչական մարմնի գործառույթն է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության եւ սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման եւ անվտանգության ապահովման ոլորտներում ռիսկերի կառավարումը եւ ՀՀ օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաեւ կանխարգելիչ միջոցառումների իրականացումը նշված ոլորտներում: Դատելով իրավիճակից՝ «Աթենք» ՍՊԸ-ում կանոնների խախտում է եղել, եւ տեսչական մարմինը կարգադրություն է իջեցրել, ինչի հետ ՍՊԸ-ն համաձայն չէ: Մեր հետաքննությունը կշարունակենք՝ հասկանալու համար, թե ինչ խախտումներ է արձանագրել տեսչական մարմինը «Աթենք» ՍՊԸ-ում:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՈՒ Է ԹԻՐԱԽԱՎՈՐՎԵԼ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքային իշխանությունը ապօրինաբար մանդատից զրկել էր «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սոնա Աղեկյանին, եւ այդ որոշումը «Մայր Հայաստան»-ը բողոքարկել էր դատական կարգով:

Այս եւ այլ թեմաների շուրջ «Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցն է եղել «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սոնա Աղեկյանը:

-Տիկին Աղեկյան, ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է քաղաքային իշխանությունը կենտրոնացած ընդդիմադիր գործիչների վրա՝ զրկելու նրանց մանդատից:

-Քաղաքային իշխանությունը, աշխատելու փոխարեն, այն դեպքում, երբ քաղաքում խնդիրներն ահռելի թիվ են կազմում եւ ոչ մի ոլորտում խնդիրների լուծում չկա, ջանում են ակտիվ ընդդիմադիր քաղաքական գործիչներին հեռացնելու՝ նրանց մանդատից զրկելու:

Փոխարենը կարող էին լուծել խնդիրները, բյուջեի հարցերը կարգավորել եւ թոթափել քաղաքացիների դիմումները՝ հեշտացնելով նրանց կյանքը:

Պետք է նշել, որ Երեւանի գործող քաղաքային իշխանությունը չի ստացել Երեւանի քաղաքացիների վստահության քվեն, նրանք միայն մոտ ինը տոկոսը կցելով-կցմցելով, կուլիսային կեղտոտ գործարքների միջոցով՝ կարողացան իրենց ձեռքում պահել քաղաքային իշխանությունը: Մեր քաղաքացիները պետք է հիշեն, որ այսօր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության «քույրիկ» կազմակերպությունը նախընտրական եւ ընտրական գործընթացների ընթացքում ինքն իրեն հայտարարում էր որպես ընդդիմադիր: Ստացվում է, որ կորզելով քաղաքացիների վստահությունը, իրենք դավեր էին նյութում երեւանցիների թիկունքում եւ ընդդիմադիր էին ձեւանում, որպեսզի կարողանան այդ ձեւով գոնե Տիգրան Ավինյանին նստեցնեն Երեւանի քաղաքապետի աթոռին: Տգեղ իրավիճակ է, երբ ավագանիում ընդդիմադիր տեսակետով հանդես եկած մյուս խմբակցությանը եւս պայթեցրին եւ նույնպես գործիք դարձրին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ձեռքում: Փոխանակ աչալուրջ լինեն՝ խնդիրներին լուծումներ տալու համար, նրանք փորձում են լռեցնել: Իրենց նպատակը Երեւան համայնքը ծաղկեցնելը եւ զարգացնելը չէ, այլ լռեցնելը բոլոր նրանց, ովքեր փորձում են կապի մեջ լինել քաղաքացիների հետ եւ բարձրաձայնել նրանց խնդիրները: Նրանք կեղտոտ գործողությունների մեջ են, մինչդեռ քաղաքացիները խցանումների մեջ են, քաղաքը բեռնաթափված չէ, աղտոտվածության շեմը թույլատրելին անցել է: Մենք տեսնում ենք, թե ինչպես է գործում հանրային տրանսպորտը՝ թե՛ վերգետնյա, թե՛ ստորգետնյա, թե ինչ վիճակում են կոյուղաջրերն ու ջրահեռացման համակարգերը: Այս ամենի մասին կարող ենք մի քանի ժամ խոսել, սակայն նրանք քաղաքում խնդիրները լուծելու նպատակ չունեն, այլ պարզապես իմիտացիա են ստեղծում խնդիրների լուծման՝ համայնքային բյուջեից իրենց գործուղումների, տարբեր չակերտյալ մշակութային միջոցառումների կազմակերպման համար գումարներ ծախսելով: Սակայն այս ամենի ընթացքում քաղաքացիների խնդիրներն իրապես չեն լուծվում:

Օրինակ՝ քաղաքացիների ընդունելությունները սահմանափակված էին եւ միայն մեր բարձրաձայնելուց հետո, իբր, ընթացակարգ մշակվեց, սակայն նման որեւէ փորձ չի եղել:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԻՐԱՎԱՐՁԱՅԻՆ

ՈՒՄ ԿԸՆՏՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը վարչության նիստ կանի. ՔՊ-ականները պետք է քվեարկությամբ որոշեն՝ ով պետք է փոխարինի Գրիգոր Մինասյանին արդարադատության նախարարի պաշտոնում:

ՔՊ-ում ի սկզբանե հակված են եղել, որ այդ կարեւոր պաշտոնը պետք է իրենց կուսակցության անդամներից որեւէ մեկը զբաղեցնի:

Իշխող թիմը տարբեր թեկնածուներ է քննարկել՝ Արփի Դավոյան, Արուսյակ Ջուլհակյան, Վլադիմիր Վարդանյան, Հերիքնազ Տիգրանյան, քննարկվել է նաեւ Սիսակ Գաբրիելյանի թեկնածությունը:

Թեկնածուների ցանկը, սակայն, գնալով սեղմվել է, քանի որ մեծ մասը՝ Վլադիմիր Վարդանյանը, Հերիքնազ Տիգրանյանը, Սիսակ Գաբրիելյանը հրաժարվել են այդ պաշտոնին առաջադրվելուց:

Արդյունքում, երկու թեկնածուների շուրջ է ընթացել քննարկումը՝ Արուսյակ Ջուլհակյան եւ Արփի Դավոյան (թեեւ վերջինս առհասարակ կապ չունի իրավաբանության եւ արդարադատության հետ):

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ում երկար քննարկումներից հետո հասկացել են, որ Արփի Դավոյանի թեկնածությունը զավեշտալի է, անգամ Նիկոլ Փաշինյանի սրտով չի եղել դա, չնայած, որ վերջինս ասել է՝ վարչության նիստին՝ քվեարկելիս, կորոշեն:

Ինչպես արդեն «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել է, Արփի Դավոյանի լոբբինգով ՔՊ-ում զբաղվում են հենց ինքը՝ Դավոյանը, որի բաղձալի երազանքն է արդարադատության նախարարի պաշտոնը զբաղեցնելը, ինչպես նաեւ նրա մտերիմ Անդրանիկ Քոչարյանը:

Այս պահի դրությամբ ՔՊ-ում արդարադատության նախարարի հավանական թեկնածուն Արուսյակ Ջուլհակյանն է, ով նաեւ ԱԺ պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահն է:

Ամեն դեպքում, այս պահի դրությամբ վարչության նիստին կորոշեն արդարադատության նախարարի հարցը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 227

2019 թվականի մայիսի 19-ին՝ ՀՀ ազգային ժողովում ունեցած ելույթի ժամանակ, Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Քննչական կոմիտեն ջանքեր կգործադրի խաղաղ պայմաններում զինծառայողների մահվան դեպքերը բացահայտելու համար. նման պայմանավորվածություն եղել է»:

Բայց իրականում խաղաղ պայմաններում զինծառայողների մահվան դեպքերը բացահայտված չեն: Զոհերի հարազատները այս ընթացքում բազմիցս բողոքի ակցիաներ են արել, հավաքվել են եւ ԱԺ-ի եւ կառավարության դիմաց եւ նշել, որ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունից հետո որեւէ արդյունք չկա. ունեցել են մի քանի հանդիպում ՔԿ-ում, դատախազությունում, սակայն՝ անարդյունք:

Միաժամանակ, բանակում խաղաղ պայմաններում զոհերի թիվը, ցավոք, քիչ չէ: Համաձայն դատախազության՝ News.am-ի հարցման պատասխանի՝ 2023 թվականի հունվարի 1-ից մինչեւ սեպտեմբերի 8-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ԶՈՒ եւ ԱՀ ՊԲ-ում արձանագրվել է զինծառայողների մահվան 63 դեպք, որից միայն 5-ը՝ սեպտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում: 2022-ին գրանցվել է 64 դեպք, սակայն ոչ թե 7 ամիսներին, այլ 12: Նույն թվականին եւս 224 զինծառայող զոհվել է սեպտեմբերյան հարձակման հետեւանքով: 2021-ին գրանցվել է մահվան 74 դեպք:

19.01.2023թ. Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի տարածքում տեղակայված պաշտպանության նախարարության N զորամասի ինժեներասակրավորային վաշտի կացարանում հրդեհ բռնկվեց, որի հետեւանքով զոհվեց 15 զինծառայող: Քննությունն այն մասով է, թե ինչպես պատահեց հրդեհը, ով բենզինը բերեց, ով լցրեց եւ այլն, սակայն պատշաճ բացատրություն չտրվեց, թե ինչու է պաշտպանության նախարարությունը զինվորներին պահում խրճիթային պայմաններում:

ՊՈՒՏԻՆԸ ԿՀԱՆԴԻՊԻ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԵՎ ԱԼԻԵՎԻ ՀԵՏ

Վլադիմիր Պուտինը վաղը՝ ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստից առաջ, երկկողմ հանդիպումներ կունենա Փաշինյանի եւ Ալիեւի հետ, հայտնում է ՌԴ նախագահի օգնական Յուրի Ուշակովը:

Հիշեցնենք, որ Նիկոլ Փաշինյանը հոկտեմբերի 7-8-ին աշխատանքային այցով մեկնել է ՌԴ, նա Մոսկվայում կմասնակցի ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի հերթական նիստին:

ՉԵՆ ՁԵՐԲԱԿԱԼԵԼ

Հոկտեմբերի 5-ին ՆԳՆ-ից պաշտոնապես հայտնել էին, որ ձերբակալվել է Սյունիքի մարզի Տեղի համայնքապետ Դավիթ Ղուլունցը, որը նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է:

Ըստ ՆԳՆ-ի՝ Դավիթ Ղուլունցը ձերբակալվել է՝ զինծառայողների կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու պատճառով:

Ավելի ուշ հայտնի դարձավ, որ վերջինս ազատ է արձակվել:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Դավիթ Ղուլունցի հետ՝ պարզելու, թե ինչո՞ւ էին նրան ձերբակալել, ի՞նչ են պատճառաբանել եւ ինչպե՞ս ստացվեց, որ ազատ արձակեցին, սակայն վերջինս տարօրինակ պահվածք դրսեւորեց եւ, ըստ էության, հերքեց ՆԳՆ-ի պաշտոնական տեղեկությունը:

«Ժողովուրդ, ես նման հարցերի չեմ պատասխանում, ինձ ոչ ձերբակալել են, ոչ էլ.... Հաջողություն», - ասաց նա:

Երբ պնդեցինք, որ ՆԳՆ-ից պաշտոնապես հաստատել են ձերբակալության մասին տեղեկությունը, ինչո՞ւ է հիմա հերքում, Դավիթ Ղուլունցը անջատեց հեռախոսը:

ՄԻՐԶՈՅԱՆԸ ՄԵԿՆԵԼ Է ՄՈՍԿՎԱ

Հոկտեմբերի 7-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն աշխատանքային այցով կգտնվի Մոսկվայում՝ մասնակցելու ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստին ընդառաջ կայանալիք ԱԳ նախարարների խորհրդի նիստին:

Այս մասին հայտնում է ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակ Անի Բադալյանը:

Նշենք, որ Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովն աշխատանքային այցով մեկնել է Մոսկվա:

Նա եւս կմասնակցի ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստին ընդառաջ կայանալիք ԱԳ նախարարների խորհրդի նիստին:

ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակ Անի Բադալյանը նշել է. «Արարատ Միրզոյանը մասնակցում է ԱՊՀ նիստին: Ադրբեջանի ԱԳ նախարարի հետ առանձին հանդիպում նախատեսված չէ», - նշել է նա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Ադրբեջանի բանակի ցամաքային զորքերի 2-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մաիս Բարխուդարովը հաստատել է տեղի ՁԼՄ-ներում հրապարակված տեղեկությունը, որը վկայում է նրան պաշտոնից ազատելու մասին:

Բարխուդարովը լրագրողներին ասել է, որ պաշտոնից ազատվել եւ ուղարկվել է պաշտպանության նախարարության տրամադրության տակ: Գեներալը հայտնել է, որ «ոչ մի հիասթափություն» այս որոշման հետ կապված չի զգում: «Որոշումն ընդունվել է, եւ ես ներկայում նախարարության տրամադրության տակ եմ անցել»,- ասել է Բարուդարովը: Նա նաեւ նշել է, որ տեղեկություն չունի նոր պաշտոնի նշանակման մասին:

ՀԱՅՏՆԵԼ Է ՉՎԵՐԹՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Իրանի Քաղավիացիայի կազմակերպության խոսնակը հայտարարել է, որ այսօր երեկոյան՝ տեղական ժամանակով ժամը 21:00-ից մինչեւ առավոտյան 6:00-ն, որոշ թռիչքներ կդադարեցվեն երկրի ողջ տարածքում: Այս մասին հայտնում է IRNA գործակալությունը:

Ջաֆար Յազարլոն կիրակի երեկոյան տեղեկացրել է, որ թռիչքների կասեցումները տեղի կունենան գործառնական սահմանափակումների պատճառով:

Նա խորհուրդ է տվել ուղեւորներին ստուգել իրենց թռիչքների չվացուցակները համապատասխան ավիաընկերությունների հետ եւ հաստատել իրենց ճամփորդական ծրագրերը մինչ օդանավակայան մեկնելը:

ՏԱՐԲԵՐ ՍՑԵՆԱՐՆԵՐ

Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ռազմածովային ուժերի հրամանատարը Իսրայելի վարչապետին զգուշացրել է կրակի հետ խաղալու մասին՝ հայտարարելով, որ Իրանը մի շարք սցենարներ է մշակել՝ իր թշնամիներին դիմակայելու համար:

«Ալ-Ալամ» լրատվական ցանցին տված հարցազրույցում փոխծովակալ Ալի Ռեզա Թանգսիրին ասել է, որ Իրանը լիովին պատրաստ է դիմակայել ցանկացած սցենարի, քանի որ Թել Ավիվն ուժգնացրել է Իրանի դեմ ռազմական գործողությունների մասին իր հռետորաբանությունը:

Ընդգծելով տարածաշրջանում նորմալ կամ արտակարգ իրավիճակներում Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլահ Սեյյեդ Ալի Խամենեի կողմից Իրանի բացարձակ պատրաստվածության եւ զգոնության մասին շեշտադրումները, նա հավաստիացրել է, որ այդ առումով պատրաստականության տարբեր միջոցառումներ են մշակվել:

Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ռազմածովային ուժերի հրամանատարը նշել է, որ Իրանը սցենարներ ունի յուրաքանչյուր իրավիճակի համար, որոնցից մեկը ներառում է ապագա միջադեպերի հետ կապված արտակարգ իրավիճակների ծրագիր: «Մենք մշակել ենք հակառակորդի հետ բախման մի շարք սցենարներ»,- պարզաբանել է Ալի Ռեզա Թանգսիրին:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ՏԱՆՈՒՄ Է ԽՈՇՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Այս իշխանությունը, հասկանալով կամ չհասկանալով, տարածաշրջանը տանում է խոշոր պատերազմի:

Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է «Այլընտրանքային նախագծեր» խմբի անդամ Վահե Հովհաննիսյանը:

Այս ընթացքը տարածաշրջանային խոշոր պատերազմ է հրահրում. ինչպես կանխել.

«Իրավիճակը լավ չպատկերացնելու եւ ազգային անհոգության հիմքում սեփական պատմության չիմացությունն է:

Մենք գիտենք «Գնթունիքի» «պեռոժնու» գինը, բաղադրությունը, լավն ու վատը, բայց երբեք չենք մտածի, որ Բաշ-Ապարանի կռիվը այդ կողմերում է տեղի ունեցել՝ Երեւանից ընդամենը մեկ ժամ հեռավորության վրա: Անգամ երբ լուսանկարվում ենք հուշահամալիրի մոտ, միեւնույնն է՝ չգիտենք իրականում, թե դա ինչ կռիվ էր, ինչ էր այդ ժամանակ կատարվում տարածաշրջանում, ինչ էր Թուրքիան, ուր էր գնում նրա բանակը Ապարանով, ինչ էր Ռուսաստանը, ինչ էինք մենք:

Այս իշխանությունը, հասկանալով կամ չհասկանալով, տարածաշրջանը տանում է խոշոր պատերազմի, որը տեղի է ունենալու մեր տարածքում՝ մեր քաղաքների ու գյուղերի ռմբակոծմամբ:

Եթե ուժ չենք գտնում փոխելու այս իշխանությունը, չենք ուզում փոխել կամ ավելին՝ խոնարհվում ու սպասարկում ենք նրան, ապա պետք է գոնե խնդրել՝ ուժեղացնել քաղաքաշտպանության համակարգը՝ ռմբապաստարաններ, իրազեկման համակարգեր եւ այլն, որովհետեւ այս ընթացքը այլ ելք չի ենթադրում:

Չորս կողմից մեզ զգուշացնում են՝ ռուսերեն, պարսկերեն, թուրքերեն, անգլերեն, որ վտանգավոր բան եք անում: Իսկ մենք ոչ մի ռացիոնալ բան չենք անում, ոչ մի նպատակ չենք դնում, ոչ մի բանակցային իդեա չունենք: Տհաս անչափահասի նման բոլոր առաջարկները մերժում ենք ու բոլորի համար ստեղծում լուրջ պրոբլեմներ: Պարզ չէ՞՝ վերջը ոնց է լինելու: Երեւանը չի ձեւակերպում իր գրագետ հաշվարկված շահը, բայց բոլորի շահերի հետ հակադրվում է. իսկ պարտված հասարակությունը ոչինչ չի ուզում՝ ո՛չ ներկա, ո՛չ նախկին, ոչ էլ՝ ապագա: Ուզում է միայն կենցաղ ու անվտանգություն, որն էլ հենց չի լինելու:

Հետեւություն

Լայն հասարակությանը պետք է ճիշտ ներկայացնել վիճակը, եւ պայքարի հստակ նարատիվը. «ընդվզի՛ր, որ լինի խաղաղություն»: Այս ընթացքը տանում է աղետի:

Հարթակը պետք է դառնա առավելագույնս ռացիոնալ եւ հստակ ձեւակերպի իր նպատակը. Դեէսկալացիա երկրի ներսում, դեէսկալացիա՝ երկրի սահմաններին:

Դեէսկալացիա երկրի ներսում՝ նշանակում է ներքին հաշտության ու բազմավեկտոր երկխոսության մթնոլորտ, դեէսկալացիա երկրի սահմաններին՝ նշանակում է ակտիվ գրագետ արտաքին քաղաքականությամբ ու դաշնակիցներով լուծումներ, որոնք բացառում են պատերազմը:

Այս երկու կետերը ենթադրում են բազմաթիվ ենթակետեր ու տեխնիկական աշխատանք: Հենց նման հարթակն է դառնալու հետպատերազմյան նոր լիդերություն, որը համախմբելու է բոլոր առողջ ուժերին, բոլոր ունակներին», - գրել է նա:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՆՉ ԿԱՏԱՐՎԵՑ ՍԴ–Ի ԴԻՄԱՑ

Օրերս Սահմանադրական դատարանի առջեւ լարված իրավիճակ էր: Սրբազան շարժման առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի գլխավորությամբ քաղաքացիները Հանրապետության հրապարակից քայլերթով շարժվեցին դեպի Սահմանադրական դատարան, իրենց ձեւակերպմամբ՝ հանրայնացնելու ու ամոթի, անարգանքի սյունին գամելու բոլոր այն դատավորներին, որոնք սահմանադրական են ճանաչել սահմանազատման հանձնաժողովների աշխատանքի կանոնակարգը:

ՍԴ-ի դիմաց թեժ վիճաբանություն սկսվեց ԱԺ ընդդիմադիր պատգամավոր Գառնիկ Դանիելյանի եւ ոստիկանների միջեւ: Գառնիկ Դանիելյանը պնդում էր, որ իրեն ոստիկանները վիրավորել են, իսկ նա հորդորել է, որ իր հետ պատշաճ խոսեն: Ոստիկաններն էլ հավաքի մասնակիցներին կոչ էին անում հետ գնալ ու լեզվակռիվ չանել իրենց հետ:

Մասնակիցները որոշ ժամանակ փակ պահեցին Բաղրամյան պողոտան, իսկ մինչ ՍԴ-ի մոտից հեռանալը՝ նրանք թերթիկներ թողեցին այնտեղ՝ «դատավո՞ր, թե՞ ծառա» գրությամբ:

Բագրատ Սրբազանը հայտարարեց, որ շարժման հաջորդ հավաքը տեղի կունեցվի չորեքշաբթի՝ հոկտեմբերի 9-ին՝ ժամը 12:00-ին, դատախազության մոտ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔԸ

2024 թվականի ապրիլի 19-ին կառավարությունը որոշում ընդունեց, ըստ որի՝ կրճատվում է հիվանդությունների ցանկը, որով զորակոչի ենթակա անձինք ոչ պիտանի են ճանաչվում: Թեթեւ աստիճանի մտավոր հետամնացության, գանգոսկրերի, գլխուղեղի նորագոյացությունների՝ կիստաների եւ գիշերամիզության ախտանշանների դեպքում զինծառայությունից ազատվել այլեւս չի լինի: Գործադիրը հիմնավորում է, թե այս խստացմամբ փորձում է վերացնել կոռուպցիոն ռիսկերը:

Երեկ ՊՆ-ն պաշտոնապես հայտնեց, որ հոկտեմբերի 6-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, հայտնաբերվել է ՊՆ N զորամասի զինծառայող Վահե Բագրատի Հարությունյանի դին՝ հրազենային վնասվածքով: Դեպքի հանգամանքներն ամբողջովին պարզելու նպատակով ընթանում է քննություն:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ զինվորը, որին գտել են մահացած, ըստ նախնական վարկածի, ինքնասպան է եղել: Վերջինս այս ամառ էր զորակոչվել բանակ, ասել է թե՝ մի քանի ամսվա ծառայող էր: Դեպքը եղել է Վարդենիսի հատվածի մարտական դիրքում: Ավելին՝ ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ զինվորը առողջական խնդիրներ է ունեցել եւ որոշակի սահմանափակումներով է ծառայության մեջ ընդգրկվել:

Դեպքով կատարվում է քննություն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՆՉ ՈՐՈՇԵՑ ԲԴԽ-Ն

ԳՈՐԾԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ դատավոր Դավիթ Հարությունյանը, որի լիազորությունները մեկ տարի առաջ Բարձրագույն դատական խորհուրդը դադարեցրել է, դիմել է ԲԴԽ՝ իր գործը վերանայելու պահանջով:

Հիշեցնենք, որ 2023 թվականի հուլիսի 3-ին Բարձրագույն դատական խորհուրդը որոշել էր դադարեցնել դատավորի լիազորությունները՝ լրատվամիջոցներին տված հարցազրույցի համար: ԲԴԽ-ն նիստը դռնփակ էր անցկացրել՝ պնդելով, թե դա բխում է արդարադատության շահից:

Ավելին՝ Խորհուրդը որոշել էր Հարությունյանին հեռացնել նիստերի դահլիճից, եւ սա այն դեպքում, երբ դատավորը դեռեւս չէր հասցրել իր կարգապահական գործի վերաբերյալ դիրքորոշում հայտնել՝ չնայած բազմիցս պնդել էր, որ դիրքորոշում ներկայացնելու է: Այն պահին, երբ դատավորին հեռացրել են նիստերի դահլիճից, այնտեղ ներկա չեն եղել նաեւ դատավորի փաստաբանները. ԲԴԽ որոշումից հետո Հարությունյանը դիմել էր Սահմանադրական դատարան, եւ Բարձր դատարանը մայիսի 21-ին որոշում է կայացրել, որ այս գործով հրապարակայնության սկզբունքին, դատական սանկցիա կիրառելուն վերաբերող նորմերը ԲԴԽ-ն Հարությունյանի նկատմամբ այլ մեկնաբանությամբ է կիրառել: Դատական օրենսգրքի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի վերանայելու դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին իր որոշումը նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով: Տվյալ դեպքում Սահմանադրական դատարանի որոշումը նոր հանգամանք է: Օրենքով սահմանվում է նաեւ, որ Բարձրագույն դատական խորհրդի որոշումը վերանայելու դիմումը կարող է ներկայացվել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցած մարմնի կամ այն դատավորի կողմից, որի նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում է կայացվել: Այս դեպքում Հարությունյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցած մարմինն արդարադատության նախարարությունն է, որը ՍԴ-ի որոշումից հետո չի դիմել Բարձրագույն դատական խորհուրդ՝ վերանայման հարցով, այլ դիմումը ներկայացրել է Դավիթ Հարությունյանը:

Արդյունքում, Դավիթ Հարությունյանի գործը այս պահին ԲԴԽ-ում է եւ դատավորի կողմից ՀՀ ԲԴԽ է ներկայացվել պատճառաբանված միջնորդություն՝ իր դիմումի քննությունը բանավոր, դռնբաց դատական նիստում անցկացնելու վերաբերյալ:

Սակայն ԲԴԽ-ն նիստը անցկացնում է դռնփակ, եւ հիմա (խմբ.) դատավորի փաստաբանական խումբը գտնվում է ԲԴԽ-ի դիմաց՝ պահանջելով բացել ԲԴԽ նիստերի դահլիճի դռները եւ նիստը անցկացնել հրապարակային:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԵՐԵԽԱՅԻ ԱՌԵՎԱՆԳՄԱՆ ՓՈՐՁԻ ԳՈՐԾՈՎ

Նախաքննության ընթացքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Երեւան քաղաքի բնակիչ 57-ամյա անձը «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայով մոտենում է միասին քայլող 11 եւ 12 տարեկան երկու երեխայի եւ հորդորելու, համոզելու եղանակով փորձում նրանց նստեցնել իր ավտոմեքենան: Այս մասին հայտնում է քննչական կոմիտեն:

57-ամյա անձի նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 44-191-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (2 դրվագ), հանրային քրեական հետապնդում է հարուցվել, եւ նրան ներկայացվել է մեղադրանք:

Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը:

Քննության ընթացքում հարցաքննվել են Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գործող բոլոր դպրոցների եւ մանկապարտեզների տնօրենները՝ պարզելու համար իրենց հաստատություններից երեխայի առեւանգման կամ դրա փորձ եղե՞լ է, թե՞ ոչ, եւ նման դեպքի վերաբերյալ տվյալներ չեն ստացվել:

ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«2024թ. հոկտեմբերի 6-ին ՀՀ ՊՆ Վարդենիսի ՌՈ բաժնից ստացվել է առերեւույթ հանցագործության մասին պատշաճ հաղորդումն այն մասին, որ նույն օրը՝ ժամը 10:00-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի հրետանային դիվիզիոնի կրակային դիրքից մոտ 30 մետր հեռավորության վրա հայտնաբարվել է նույն դիվիզիոնի զինծառայող Վահե Բագրատի Հարությունյանի դին՝ գլխի շրջանում հրազենային մարմնական վնասվածքով:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հինգերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված առերեւույթ հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, ձեւավորվել է քննչական խումբ:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում կատարվել են անհետաձգելի քննչական եւ վարութային այլ գործողություններ: Կատարվել է դեպքի վայրի զննություն, վերցվել են համապատասխան փաստաթղթերը, կատարվել է դիակի արտաքին զննություն, փորձագետների մասնակցությամբ վերցվել են փորձանմուշներ: Նշանակվել է դիակի դատաբժշկական, դատագենետիկական, դատաձգաբանական, դատաթմրաբանական փորձաքննություններ: Հարցաքննվել են ինչպես դեպքի օրը, այնպես էլ դրանից առաջ կրակային դիրքում ծառայություն իրականացրած զինծառայողները:

Հետաքննության մարմնին տրվել է օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություն՝ դեպքի իրական հանգամանքները եւ վարույթի համար այլ նշանակություն ունեցող տեղեկություններ ձեռք բերելու նպատակով»:

ԴԱՏԱԿԱՆ

ՈՎ Է ՔՆՆԵԼՈՒ «ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԴԵՊՔԻ» ՎԱՐՈՒՅԹԸ

Ինչպես արդեն «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր՝ ՀՀ քննչական կոմիտեն նախաքննության ավարտ է հայտարարել Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի հետ Ծիծեռնակաբերդի միջադեպի գործով:

Տեղեկությունը «Ժողովուրդ» օրաթերթին հաստատեց փաստաբան Արայիկ Պապիկյանը՝ հայտնելով, որ նախաքննության ավարտ է հայտարարվել, ու գործն ուղարկվել է դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու համար: Գործը արդեն դատարանում է, եւ այն քննելու է դատավոր Ժորա Չիչոյանը:

Նշենք, որ դատավոր Չիչոյանի հայրը Շիրակի մարզի դատախազ Արմեն Չիչոյանն է: Դատավոր Ժորա Չիչոյանը կալանքի որոշում կայացրեց 44-օրյա պատերազմում զոհված զինծառայող Ժորա Մարտիրոսյանի մոր՝ Գայանե Մարտիրոսյանի մասով, որը խնդիր էր ունեցել վարչապետի որդու՝ Աշոտ Փաշինյանի հետ, ու նրան տարավ կալանքի:

Նշենք, որ վարչապետի կնոջ գործով միակ մեղադրյալը 67 տարեկան տարեց պապիկ, ԱԺԲ անդամ Տիգրան Դրմեյանն է: Նա շարունակում է մնալ միակ մեղադրյալն, ու գործը գնում է դատարան, տեսնենք, թե ինչ կլինի դատարանում:

Հիշեցնենք, որ 2024թ. ապրիլի 24-ին՝ «Ծիծեռնակաբերդի» հուշահամալիրի անմար կրակին մոտենալու ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի եւ նրա դստեր ներկայությամբ «Ազգային ժողովրդավարական բեւեռի» անդամները բղավել էին՝ «դավաճան», «հողատու»: Միջադեպից հետո 7 անձ ձերբակալվել էր: Արդյունքում, մի խումբ անձանց կողմից առերեւույթ ատելության, խտրականության, անհանդուրժողականության կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսք հնչեցնելու, եւ հաղորդակցային-տեղեկատվական մի քանի միջոցներով տարածելու գործողությունների դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության՝ Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից, նախնական համաձայնությամբ ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը) նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՍԱՆԵՐ ԵՆ ՓԱԽԵԼ ՄԱՆԿԱՏՆԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ հոկտեմբերի 3-ին իրավապահներին է ահազանգել Տաթեւիկ Թովմասյանը, որը հանդիսանում է Կոտայք գյուղում գտնվող «Սոս մանկական գյուղի» այլընտրանքային խնամքի ղեկավարը:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի՝ նա հայտնել է, որ ժամը 5-ի սահմաններում նշված մանկատան սաներ Ա.Ն-ն եւ Մ.Բ-ն դուրս են եկել մանկատնից եւ այլեւս չեն վերադարձել:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների՝ մանկատան սաները գրություն են թողել եւ հայտնել են.

«Ես փախնում եմ ու հետ չեմ գալու, եթե ինձ փնտրեք ուրեմն իմացեք, որ չեք գտնի»:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մանկատան ղեկավարի դիմումը ուղարկվել է Աբովյանի քննչական բաժին:

Նյութերը՝ Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 3-ից 4-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 95 դեպք՝ որից 1-ը նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

47 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐ՝ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հոկտեմբերի 5-ին նշվեց Դիլիջանի օրը: Սեպտեմբերի 13-ին համայնքի ավագանին որոշել է 2024 թ. հոկտեմբերի 5-ին Դիլիջանի 480 ամյակին նվիրված միջոցառման կազմակերպման համար հատկացնել 18 միլիոն 360 հազար 600 դրամ, որը համարժեք է մոտ 47 հազար դոլարին: Հոկտեմբերի 5-ին Դիլիջան քաղաքում կայացավ տոնական համերգ, որտեղ ելույթ ունեցան հայտնի երգիչներ Իվետա Մուկուչյանը, Սեւակ Ամրոյանը, դիջեյ, մի քանի համույթներ: Դիլիջան քաղաքի շատ փողոցներ փոսառատ, քարուքանդ են, բանուկ Սայաթ-Նովա փողոցն ընդհանրապես մայթեր չունի, հետիոտները հայտնվում են ավտոմեքենաների առաջ, Դիլիջանում շատ են աղբակույտերը, քաղաքի բազմաբնակարան բազում շենքեր կոյուղու համակարգի անսարքության պատճառով վատթար վիճակում են, բազմահարկ շենքերից մեկը սպառնալից կերպով թեքված է, իսկ Դիլիջանի համայնքապետարանը ու ավագանին 47 հազար դոլարին համարժեք գումար են հատկացրել եւ ծախսել՝ Դիլիջանի 480-ամյակը նշելու համար:

ՌՈՒՍԱԿԱՆ ԶՈՐԱՆՈՑՆ ԱՌԱՋԻԿԱ ՕՐԵՐԻՆ ՔԱՆԴԵԼՈՒ ԵՆ

2021 թվականի օգոստոսի սկզբից Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղում էին գտնվում ռուս զինվորականներ: Նրանք այդպես էլ ոսկեպարցիներին չհայտնեցին Ոսկեպարում իրենց գտնվելու նպատակը. ենթադրվում է, որ նրանք սահմանի այդ հատվածում մասնակցելու էին Ադրբեջանի հետ Հայաստանի սահմանազատման աշխատանքներին, սակայն այդ գործում նրանց միջնորդության կարիքը չզգացվեց: 2021 թվականից՝ մոտ մեկ տարի, ռուս զինվորականները զբաղված էին Ոսկեպարում իրենց կեցավայրի՝ գյուղի չբնակեցված առանձնատներից մեկի բարեկարգմամբ: 2022 թվականին Ոսկեպարում, Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի եզրին գտնվող հարթեցված տարածքում հավաքովի մոդուլներից կառուցվեց զորանոց: Ոսկեպարում՝ զորանոցի կողքին, միջպետական ավտոճանապարհի եզրին կանգնեցվեց տուֆից կերտված երկթեւանի, հայ-ռուսական բարեկամությունը խորհրդանշող խաչքար: Նման մի զորանոց էլ Տավուշի մարզում կառուցվեց Բերդ խոշոր համայնքի սահմանամերձ Այգեպար գյուղում՝ ԽՍՀՄ ժամանակ գործած փոքր օդանավակայանի տարածքում: Ռուսական կողմը առաջարկել էր Հայաստանին վաճառել Ոսկեպարում կառուցված զորանոցը, սակայն թանկ գնի պատճառով հայկական կողմը չի համաձայնել: Իրազեկ աղբյուրից տեղեկացանք, որ առաջիկա օրերին Ոսկեպարում գտնվող զորանոցը Ռուսաստանի զինուժը կքանդի, կապամոնտաժի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

YoHealth

ԼԵՌՆԱԳՆԱՑՆԵՐԻՆ 100-ԱԿԱՆ FTN-ՈՎ Է ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ

YoHealth հավելվածի հայտարարած լեռնագնացության մարտահրավերն ու արդյունքներն ամփոփվել են. 50 լեռնագնացներ վերջին 20 օրերի ընթացքում հաղթահարել են Հայկական լեռնաշխարհի տարբեր բարձունքներ եւ գագաթներին տեղադրել YoHealth հավելվածի դրոշները: Ինչպես եւ նախատեսվել էր, գագաթ հասած յուրաքանչյուր լեռնագնաց արշավի արդյունքում Fastex-ի կողմից պարգեւատրվել է 100 FTN-ով, որն այսօրվա տվյալներով համարժեք է 100 հազար ՀՀ դրամի:

Արշավորդները վերագայել են Հայաստանի տարբեր մարզերի բարձունքներ՝ Սուրբ լեռ (2157մ), Հատիս (2528 մ), Կարմիր Կատար (3530 մ), Կապուտջուղ (3906 մ), Կապուտկող լեռ (3074 մ), Խուստուփ լեռ (3206 մ), Թրասար (3594 մ), Կարմիր Կատար (3530 մ) եւ այլ լեռներ:

Լեռնագնաց Ժաննա Հարությունյանն ընկերների հետ երկու գագաթ է բարձրացել՝ Մեծ Մայնեղ եւ Եղջերվասար՝ 2500 մ բարձրությամբ. «9 ամիս դադարից հետո YoHealth-ի մարտահրավերն է հենց նպատակ հանդիսացել, որ նորից սկսեմ: Մոտ 20 կմ ենք քայլել, 30 հազարից ավել քայլ ենք արել այդ ընթացքում: Արշավն սկսել ենք Գեղարքունիքի մարզից եւ ավարտել Տավուշի մարզում: Տպավորությունները դրական են, արշավը համարում եմ ստացված», - ասել է նա:

Էդգար Հարությունյանը, ով արդեն 21 տարի լեռնագնացությամբ է զբաղվում, մենակ է իրագործել արշավը. «Բարձրացել եմ Արա լեռ՝ 2577 մ: Ճանապարհի ընդհանուր երկարությունը 16.5 կմ էր, քայլերի ընդհանուր քանակը՝ մոտ 23 հազար: Ծրագիրը պատահական եմ տեսել: Մենակ եմ բարձրացել, քանի որ նպատակ ունեի նաեւ գեղեցիկ նկարահանում անել»:

Fastex-ի թողարկած YoHealth բջջային հավելվածը հաշվարկում է օգտատերերի քայլերը եւ դրամայնացնում դրանք: Հավելվածը ներբեռնելուց հետո օգտատերն ստեղծում է հաշիվ, կատարում է քայլաչափի կարգավորումներ, այնուհետեւ որոշակի ժամանակահատվածում իր կատարած քայլերի հաշվարկով փոխանակում է դրանք նվերների կամ թվային ակտիվների հետ: YoHealth հավելվածը ոչ միայն խթանում է առողջ ապրելակերպը, այլեւ նորարարական մարքեթինգ է, որը հնարավորություն է տալիս տնտեսվարողներին բարձրացնել իրենց արտադրանքի ճանաչելիությունը թվային նոր հարթակում:

Հավելվածը հասանելի է ինչպես App Store-ում, այնպես էլ APK հղումով:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տալիս է հսկայական հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exchange փոխանակման հարթակը, Fastex Card-ը, Fastex Wallet-ը եւ ftNFT-ն՝ իր հարթակներով եւ ֆիզիթալ սփեյսներով: Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը համաշխարհային թվային ֆինանսների զարգացող աշխարհում՝ մշտապես հետեւելով ոլորտի միտումներին:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՅԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԾԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ ՊԱՏՐԱՍՏ Է

Մետրոյի «Աջափնյակ» կայարանի նախագծի լրամշակված տարբերակը պատրաստ է: «Աջափնյակ» կայարանի նախագծի շուրջ ձեւավորված մասնագիտական խումբն այժմ իրականացնում է փաթեթի ուսումնասիրություն:

Այս մասին Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական նիստի ժամանակ հայտնեց «Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրեն Անետա Բաբայանը՝ նշելով, որ նախագծող ընկերությունը փաթեթը պաշտոնապես ներկայացրել է հոկտեմբերի մեկին:

«Մետրոյի «Աջափնյակ» կայարանի նախագծի շուրջ ձեւավորված մասնագիտական խմբի բոլոր անդամներին փաթեթը եւ նախնական օրակարգն արդեն ներկայացվել է, որոնք այժմ ուսումնասիրվում են: Այս շաբաթ նախատեսվում է մասնագիտական խմբի նիստ, որի օրակարգում դրված է այս փաթեթն ընդունելու եւ երկրորդ անգամ պարզ փորձաքննության ներկայացնելու հարցը», - նշեց Անետա Բաբայանը:

Անդրադառնալով ծրագրի ֆինանսավորման հարցին՝ նա ընդգծեց, որ այն քննարկվել է նաեւ միջազգային կառույցների հետ: Ըստ նրա՝ բացի նրանից, որ 2025 թվականի պետբյուջեի նախագծում մետրոյի «Աջափնյակ» կայարանի կառուցման համար արդեն նախատեսվել է մոտ 9,6 միլիարդ դրամ, այլ նաեւ քննարկվում է Եվրասիական հիմնադրամի եւ մի շարք այլ դոնոր կառույցների հետ ծրագրի շրջանակում համագործակցության հարցը:

ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, թե 2023 թվականին դժբախտ պատահարների քանի՞ դեպք է տեղի ունեցել ՀՀ-ում եւ դրանց հետեւանքով քանի՞ մարդ է տուժել:

Այսպիսով, մայրաքաղաքում 3 դժբախտ դեպք է տեղի ունեցել, որոնցից տուժել է 4, իսկ մահացել՝ 3 մարդ:

Արմավիրի մարզում 2023 թվականին 1 դժբախտ պատահար է տեղի ունեցել, որից տուժել է 1 անձ:

Լոռու մարզում տեղի ունեցել 3 դժբախտ պատահար, տուժել է 3 մարդ:

Կոտայքի մարզում տեղի է ունեցել 2 դժբախտ պատահար, որոնցից տուժել է 2, մահացել՝ 1 մարդ:

Դժբախտ պատահարների քանակով Սյունիքի մարզն առաջատար է: Սյունիքի մարզում 2023 թվականին տեղի է ունեցել 9 դժբախտ պատահար, որոնցից տուժել է 9 մարդ, նրանցից 1-ը՝ կին:

Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Շիրակի, Վայոց Ձորի եւ Տավուշի մարզերում դժբախտ պատահարներ չեն եղել:

Իսկ ի՞նչ դժբախտ պատահարներ են եղել:

Շուրջ 13 դժբախտ պատահար տեղի է ունեցել հանքագործական արդյունաբերության եւ բացահանքերի շահագործման արդյունքում, որտեղ տուժածների ընդհանուր թիվը 13 է, իսկ մահացածներինը՝ 1:

Մշակող արդյունաբերության ժամանակ տեղի է ունեցել 4 դժբախտ պատահար, որից տուժել է 5 անձ, իսկ մահացել՝ 3: Էլեկտրականության, գազի, գոլորշու եւ լավորակ օդի մատակարարման աշխատանքների ժամանակ տեղի է ունեցել 1 դժբախտ պատահար, որից տուժել է 1 մարդ: Մահացած անձինք չկան:

Ուսումնասիրելով ինֆոգրաֆիկան՝ կարելի է նկատել, որ 2000 թվականից մինչեւ 2023 թվականները դժբախտ պատահարների թիվը, բարեբախտաբար, պակասել է:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 10 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի, Կառավարության 03.08.2023թ. N1332-Ն եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է Արարատի մարզի Մասիս համայնքի Սիս գյուղի վարչական տարածքում (7.6 հա) Աշոտ Մանուկյանի սեփական հողատարածքում ստորերկրյա ջրային ռեսուրսից գյուղատնտեսական /ոռոգում/ նպատակով 16.6 լ/վ ջրաքանակով ջրառի շրջգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթերի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթերի նախագծերի նախնական տարբերակներին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից 18:00-ն, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթերի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթերի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի հոկտեմբերի 14-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակում:

Շրջակա միջավայրի նախարարություն

ԻՆՉ ՊԱՏԿԵՐ Է ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ

ՀՀ Վիճակագրական կոմիտեն հրապարակել է բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակի շարժն ըստ ուսուցման ձեւի, ՀՀ մարզերի եւ Երեւան քաղաքի, 2023/2024 ուստարում:

«Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ 2023/2024 թվականների ուսումնական տարում առկա 53 ՀՀ պետական եւ մասնավոր բուհեր են ընդունվել 16 հազար 21 ուսանող:

Նշված ժամանակահատվածում ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 72 հազար 58 ուսանող:

2023 թվականին համալսարանն ավարտել է 13 հազար 560 ուսանող, ինչը ընդունվածների քանակի համեմատ գրեթե 3 հազարով քիչ է:

Ստացվում է, որ մեկ տարում ընդունվածների եւ ավարտածների բացարձակ թվերի արտադրյալը չի նպաստում ՀՀ բուհերում ուսանողների ավելացմանը:

Պատճառն այն է, որ տարեցտարի կրճատվում է բուհ դիմող ուսանողի թիվը:

Team ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ՝ DigiTec-ՈՒՄ

Wi-Fi, ԽԱՂԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑ ԵՎ Smart home

Երեկ «Մերիդիան էքսպո կենտրոնում» մեկնարկեց տարածաշրջանի ամենախոշոր տեխնոլոգիական «Դիջիթեք» ցուցահանդեսը: Team-ը կրկին ներկայացավ ընկերությունների խմբով, որի մասնակիցներին համախմբում է նորարար գաղափարներ կյանքի կոչելու եւ սեփական երկրի տնտեսության աճի վրա ազդելու մեծ ցանկությունը:

Team ընկերությունների խմբի ամենախոշոր Team Telecom Armenia-ն՝ նոր սերնդի օպտիկամանրաթելային ցանցի Wi-Fi 7 ծածկույթում ապահովում է մինչեւ 1500 Մբ/վ արագություն: Ընկերությունը նաեւ ներկայացնում է զվարճանքային Cosmo Box-ը, որը, փոխարինելով ավանդական TV-սարքը, հեռուստացույցը դարձնում է «խաղային»: Մոտ 1800 խաղերի շարքում են՝ Need for Speed, Call of Duty, Fortnite, Dota2, Cyberpunk 2077 եւ այլ սիրված խաղերը:

Team Systems-ի լուծումները ստեղծում են միջավայր, որտեղ «Խելացի տան» սարքավորումներն ու տեխնոլոգիաները գործում են աննկատ, բայց արդյունավետ: Team Systems-ը, HDL ընկերության հետ համագործակցությամբ, ներկայացրեց Smart Place-ը, որը ներառում է ավտոմատացման խելացի լուծումներ՝ նախատեսված տների, գրասենյակների եւ հյուրանոցների համար:

TeamPay ընկերությունը ներկայացնում է էլեկտրոնային դրամապանակը՝ հավելված, որն իր պարզ եւ հարմար ինտերֆեյսի միջոցով թույլ է տալիս օգտատերերին պլանավորել եւ կատարել ավտոմատ վճարումներ, ինչպես նաեւ վճարումների խմբերի ստեղծման պարզության եւ տվյալների անվտանգության միջոցով ապահովում է օգտագործման հարմարավետություն ու անվտանգություն:

«Դիջիթեքը տեխնոլոգիաների էպիկենտրոն է, որտեղ ծնունդով հայկական ընկերությունները հնարավորություն են ստանում ներկայացնելու իրենց նորարար լուծումները, ստեղծելու նոր կապեր եւ գտնելու նոր գործընկերներ: Որպես տեխնոլոգիական ընկերություններին միավորող խումբ՝ Team-ը չէր կարող չմիանալ տարվա ամենասպասված տեխնոլոգիական միջոցառմանը թե՛ որպես մասնակից, թե՛ որպես աջակից՝ խրախուսելու Հայաստանում տեխնոլոգիաների ու նորորարության զարգացումը»,- նշում է «Թիմ» ընկերությունների խմբի համահիմնադիր Հայկ Եսայանը:

Team ընկերությունների խմբի Team Solutions-ը ստեղծում է ծրագրային ապահովման գործիքներ ու լուծումներ, որոնք օգնում են հաճախորդներին ավտոմատացնել գործընթացներն ու ընդլայնել իրենց գործունեությունը: Ընկերությունը մշակում է նաեւ կառավարման էլեկտրոնային համակարգեր, իսկ ZANGEZOR եւ HZOR պրոդուկտների միջոցով ապահովում է Հայաստանի համար կարեւոր նշանակություն ունեցող կառույցների ու ընկերությունների թեժ գծերի անխափան աշխատանքը:

Team Energy նախագիծը, որը Հայաստանում ձեւավորեց էլեկտրական մեքենաների օգտագործման մշակույթ, նույնպես DigiTec-ում է: Լիցքավորման կայաններն ապահովում են մինչեւ 160 կՎտ հզորություն եւ նախատեսված են ցանկացած մակնիշի էլեկտրական մեքենաների համար: Team Energy հավելվածի միջոցով հնարավոր է գտնել մոտակա լիցքավորման կետերը, կատարել լիցքավորում եւ վճարել կցված քարտի միջոցով, իսկ եթե Team Telecom Armenia-ի բաժանորդ եք՝ նաեւ Team-ի հեռախոսահամարի հաշվեկշռից:

Ցուցահանդեսում է նաեւ Հայաստանում առաջին առցանց մոլը՝ Buy.am-ը, որը հնարավորություն է տալիս գնումներ կատարել միաժամանակ մի քանի վայրերից եւ կազմակերպել առաքում:

Team Telecom Armenia-ն, որպես DigiTec-ի գլխավոր տեխնոլոգիական գործընկեր, այցելուներին ու մասնակիցներին կապահովի ոչ միայն ինտերնետային, այլեւ տրանսպորտային կապով՝ Հանրապետության հրապարակից դեպի DigiTec: Ցուցահանդեսը բաց կլինի մինչեւ հոկտեմբերի 6-ը:

ԸՆԹԱՑԻԿ

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ». MyInvest

Ամերիաբանկը «Դիջիթեք էքսպո 2024»-ի ֆինթեք գործընկերն է եւ ներկայանում է իր MyInvest ներդրումային հարթակով:

Այն միակ հարթակն է ՀՀ ներդրումային շուկայում, որի միջոցով հնարավոր է բոպեների ընթացքում օնլայն բացել բրոքերային հաշիվ եւ առանց բանկ այցելելու գործարքներ կատարել հայկական, ամերիկյան, եվրոպական եւ ասիական երկրների բորսաներում, արտաբորսայական շուկաներում:

Նշենք, որ նույն հարթակի միջոցով տարբեր բիզնեսներ կամ ընկերություններ նաեւ հնարավորություն ունեն իրականացնելու պարտատոմսերի ու բաժնետոմսերի տեղաբաշխումներ՝ ներգրավելով նոր ֆինանսական միջոցներ իրենց բիզնեսի զարգացման համար: MyInvest հարթակի միջոցով ՀՀ մի քանի խոշոր ընկերություններ արդեն իսկ իրականացրել են Digital IPO-ներ՝ տեղաբաշխելով եւ բաժնետոմսեր, եւ պարտատոմսեր:

Ամերիաբանկը Digitec-ում բացահայտում է լավ ներդրող դառնալու համար անհրաժեշտ հատկանիշները՝ հեռատես, համբերատար, հավասարակշռված, խելացի, համարձակ եւ հաջողակ, եւ սա անում է փորձությունների միջոցով՝ 6 փորձություն՝ գոլֆից մինչեւ VR ակնոց: Բոլոր փորձությունները հաջողությամբ անցնելու պարագայում «Դիջիթեքի» այցելուները հնարավորություն ունեն անվճար բացելու բրոքերային հաշիվ եւ ստանալու իրենց առաջին բաժնետոմսը նվեր:

Ներդրումների աշխարհն էլ ավելի խորությամբ բացահայտել ցանկացողների համար «Դիջիթեքի» շրջանակում այս տարի առաջին անգամ անցկացվեց նաեւ Digi/Invest համաժողովը, որի առանցքում Ամերիաբանկի բրենդի դեպան Գարիկ Պապոյանը յուրահատուկ հումորով փորձեց բացատրել թվայնացման, ներդրումների ու ֆինանսական գրագիտության բարձրացման նրբությունները եւ հնարքները արդեն իսկ հայտնի բիզնեսմենների օրինակով: «Դիջիթեքի» ընթացքում «Ամերիաբանկի» փորձառու աշխատակիցներն այցելուներին տրամադրեցին ներդրումային ոլորտին առնչվող խորհրդատվություն, օգնեցին հաղթահարել վեց փորձությունները եւ սկսել ներդրումների իրենց ճանապարհն «Ամերիաբանկի» հետ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԷԼԵԿՏՐՈՄՈԲԻԼՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՔՎՈՏԱ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ 2024 թ. հոկտեմբերի 7-ի դրությամբ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 2 ծածկագրին դասվող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի քվոտայի շրջանակում ներմուծման սակագնային քվոտայի մնացորդը կազմում է 76 հատ:

Կոմիտեն հիշեցնում է, որ 2024 թվականի համար մաքսային արտոնությամբ՝ 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի կիրառման պայմանով, նախատեսված է երրորդ երկրներից Հայաստան ներմուծել 7400 հատ էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոց:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

Fastex

«ԳԻՏՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹ» ՓԱՌԱՏՈՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ

Ս.թ. հոկտեմբերի 1-6-ն Ազատության հրապարակում անցկացվեց «Գիտության շաբաթ» փառատոնը, որի գլխավոր հովանավորը Fastex-ն էր: Միջոցառմանը Fastex-ը ներկայացրեց իր YoCerebrum եւ Cerebrum Intelectus նախագծերը եւ տեղեկատվական դասընթացների շարքը:

Fastex-ը կարեւորում է Հայաստանում գիտությանն ուղղված նմանատիպ նախաձեռնությունների անցկացումը, որն իր հերթին ձեւավորում է մրցունակ էկոհամակարգ եւ նպաստում հասարակության շրջանում ոլորտի վերաբերյալ հետաքրքրության բարձրացմանը:

Այցելելով Fastex-ի տաղավար՝ ներկաները հնարավորություն ստացան ծանոթանալ Cerebrum Intelectus եւ YoCerebrum նախագծերին, մետավերս տիրույթին եւ ԵՊՀ-ում իրականացված «Բլոկչեյն տեխնոլոգիաների հիմունքները» թեմայով դասընթացին: Այցելուները հնարավորություն ունեին տեղում ստեղծելու իրենց եռաչափ ավատարը, մուտք գործելու YoCerebrum վիրտուալ աշխարհ եւ տեղափոխվելու տարբեր տիրույթներ, այդ թվում՝ Virtual Yerevan տարածք:

Տեխնոլոգիական աշխարհի եւ գիտության ոլորտի հանդեպ հետաքրքրվածների համար այս նախաձեռնությունը հիանալի հնարավորություն էր՝ ստանալու տպավորիչ փորձառություն եւ դառնալու տեխնոլոգիական ապագայի մի մասը:

Ի դեպ, միջոցառման ընթացքում մրցույթը հաղթած ուսանողները կկարողանան այցելել Երեւանում գտնվող ftNFT Phygital Space եւ մասնակցել Cerebrum Intelectus-ի կողմից իրականացվող մեկ բաց դասի:

«Գիտուժի» նպատակն է զարգացնել միջգիտակարգային համագործակցության մշակույթը Հայաստանում՝ ուսումնական հաստատություններում սովորող աշակերտներին եւ ուսանողներին ներգրավելով գիտության եւ նորարարական տեխնոլոգիաների ոլորտում:

Fastex-ի նորարական մոտեցումների ինտեգրումը կնպաստի գիտության զարգացմանն ու մրցունակ ոլորտի ձեւավորմանը:

Գիտուժի մասին

«Գիտուժը» հանրային նախաձեռնություն է, որը ձեւավորվել է 2021 թվականին: Այս պահին ավելի քան 190 ընկերությունների հիմնադիրներ եւ ձեռներեցներ, ինչպես նաեւ 24 ասոցիացիաներ ու հիմնադրամներ տեխնոլոգիական, բիզնես եւ այլ համայնքներից միավորվել են «Գիտուժ»-ի օրակարգի շուրջ: Համայնքը շարունակում է անընդհատ մեծանալ:

Գիտուժի օրակարգը բյուրեղացված է իր առաքելության մեջ՝ հզորացնել Հայաստանը գիտության եւ տեխնոլոգիաների միջոցով:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տալիս է հսկայական հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exchange փոխանակման հարթակը, Fastex Card-ը, Fastex Wallet-ը եւ ftNFT-ն՝ իր հարթակներով եւ ֆիզիթալ սփեյսներով: Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը համաշխարհային թվային ֆինանսների զարգացող աշխարհում՝ մշտապես հետեւելով ոլորտի միտումներին:

ԱՐՎԵՍՏԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ՊԼԱՍԻԴՈ ԴՈՄԻՆԳՈՆ ՀԱՄԵՐԳ ԿՈՒՆԵՆԱ ԵՐԵՎԱՆՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ անցկացվող Երեւանյան 16-րդ միջազգային երաժշտական փառատոնի շրջանակում հանդես կգա լեգենդար Պլասիդո Դոմինգոն:

Հոկտեմբերի 8-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում օպերային արվեստի լեգենդ, մեր ժամանակների ամենակարկառուն համաշխարհային արտիստներից մեկը՝ Պլասիդո Դոմինգոն, հանդես կգա Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ՝ Էդուար Թոփչյանի ղեկավարությամբ:

Համերգին կհնչեն արիաներ, դուետներ եւ նախերգանքներ հայտնի օպերաներից, սարսուռելաներից, ինչպես նաեւ սիրված համաշխարհային մեղեդիներ:

Սա Պլասիդո Դոմինգոյի երկրորդ այցելությունն է Հայաստան: Առաջին անգամ նա համերգով հանդես է եկել 2010 թ.-ի դեկտեմբերի 3-ին Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ՝ «Երեւանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնի շրջանակում: Համերգը կրկին ղեկավարում էր Ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանը:

ՎԱՆՈՒՇ ԽԱՆԱՄԻՐՅԱՆ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՎԱՆԴ

Հայ ազգը ինչպես հարուստ է իր պատմամշակութային կոթողներով, այնպես էլ մարդկանցով, որոնք պատմության որեւէ փուլում կերտել են իրենց պատմությունն ու ունեցել իրենց ներդրումը:

Այդ մարդկանցից մեկը պարի պետական անսամբլի մենակատար, գեղարվեստական ղեկավար եւ պարզապես մեծ հայ Վանուշ Խանամիրյանն է:

Խանամիրյանը բեմադրել է տասնամյակների հասնող ներկայացումներ, ինչպիսիք են «Գայանե», «Սպարտակ», «Լոռեցի Սաքոն», «Ռայմոնդա» «Խանդութ», «Կարապի լիճը»:

Վանուշ Խանամիրյանը մեծ ներդրում է ունեցել հայկական բալետի եւ պարարվեստի զարգացման մեջ: Նրա կարիերան հսկայական ազդեցություն է թողել հայկական մշակույթի վրա եւ նա հաճախ հիշատակվում է որպես ժամանակակից հայկական պարի մեծագույն վարպետներից մեկը:

Խանամիրյանի կյանքում շատ ուշագրավ պահեր են եղել, բայց ամենահետաքրքիրներից մեկն այն է, որ նա մի անգամ փրկել է իր թատերական խումբը եւ այն ժամանակի կարեւոր մի ներկայացում՝ շատ բարդ իրավիճակից: Նա իր թատերախմբի հետ ելույթ էր ունենում Օսմանյան կայսրության տարածքում՝ Վանում, որտեղ հաճախ տեղային իշխանությունները խոչընդոտում էին հայկական ներկայացումները:

Մի երեկո, երբ պատրաստվում էին բեմ հանել ներկայացումներից մեկը, Վանի նահանգապետը հրահանգում է դադարեցնել այն՝ պատճառաբանելով, որ ներկայացումը կարող է քաղաքական խառնաշփոթ առաջացնել: Խանամիրյանը, ով հայտնի էր իր հումորով եւ հնարամտությամբ, որոշում է «խաղալ» այդ իրավիճակի հետ: Նա բեմից հայտարարում է, որ՝ «այսօր չեք դիտելու սովորական ներկայացում, այլ Վանի նահանգապետի հատուկ պատվերով գրված ստեղծագործություն»: Նահանգապետը, ուրախ եւ հպարտ զգալով, հրահանգում է շարունակել: Ներկայացումը շարունակվում է եւ մեծ հաջողություն ունենում:

Այս դիպվածը լավ օրինակ է, թե ինչպես է Խանամիրյանը կարողացել օգտագործել իր հանճարը ոչ միայն արվեստում, այլեւ իրական կյանքում՝ հաղթահարելով այն ժամանակների դժվարությունները:

Խանամիրյանը մահացել է 2011 թվականի հոկտեմբերի 5-ին՝ իրենից հետո թողնելով մեծ ավանդ եւ պատմություն:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԹԻՄԸ՝ ՈՒԵՖԱ-Ի ԵՎ ՄԱԿ-Ի ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Փախստականների թիմը կներկայացնի Հայաստանը UEFA Unity Euro Cup - 2024 մրցաշարում, որը կկայանա Շվեյցարիայի Նիոն քաղաքում հոկտեմբերի 9-11-ը, հաղորդում է ՀՖՖ մամուլի ծառայությունը:

Փախստականներից կազմված հավաքականների միջեւ ավանդական մրցաշարն ՈՒԵՖԱ-ի եւ ՄԱԿ-ի փախստականների գրասենյակի համատեղ նախաձեռնությունն է:

Հայաստանի թիմի պատշաճ նախապատրաստմանը աջակցել են ՀՖՖ-ն եւ UNHCR Armenia-ն: Մրցաշարի վիճակահանությունը կկայանա հոկտեմբերի 9-ին:

ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒՆԻ 8 ՄԱՄՆԱԿԻՑ

Ըմբշամարտի միջազգային ֆեդերացիան ներկայացրել է ոչ օլիմպիական քաշային կարգերի աշխարհի առաջնության մասնակիցների անունները:

Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում կայանալիք մրցաշարին ազատ ոճային մարզիկներից կմրցեն Մեժլում Մեժլումյանը (61 կգ), Արման Անդրիասյանը (70 կգ), Արման Ավագյանը (79 կգ) եւ Իգոր Սարգսյանը (92 կգ), իսկ հունահռոմեականներից մեդալների համար կպայքարեն Մանվել Խաչատրյանը (55 կգ), Հրաչյա Պողոսյանը (63 կգ), Աշոտ Խաչատրյանը (72 կգ), Կարեն Խաչատրյանը (82 կգ):

Ոչ օլիմպիական քաշային կարգերի ըմբշամարտի աշխարհի առաջնությունը կկայանա հոկտեմբերի 28-31-ը:

ՆՇԵԼ Է ԻՐ ՍԵՐՆԴԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԹԻՄԻՆ

«Չելսիի» եւ Անգլիայի հավաքականի նախկին պաշտպան Ջոն Թերին նշել է իր սերնդի լավագույն թիմին:

«2009 թվականին «Բարսելոնայի» դեմ «Կամպ Նոու» գնալը, բոլոր ժամանակների լավագույն խաղացողներից մեկին դիմակայելը այն է, ինչի մասին երազում ես եւ նաեւ այն, ինչին ձգտում ես: Ես միշտ ասում եմ, որ «Բարսելոնան» իմ սերնդի լավագույն թիմն է: Եվ այդ դարաշրջանում նրա հետ կարող էր մրցել միայն մեկ թիմ՝ «Չելսին»»,- գրել է Թերին սոցցանցերից մեկում:

Հիշեցնենք, որ Թերին հանդես է եկել «Չելսիում» 1998-ից 2017 թվականներին: Պաշտպանը 5 անգամ հաղթել է Անգլիայի առաջնությունը եւ Անգլիայի գավաթը, 3 անգամ նվաճել Անգլիայի լիգայի գավաթը, ինչպես նաեւ մեկական անգամ հաղթել է Չեմպիոնների լիգան եւ Եվրոպա լիգան:

● Հոկտեմբերի 12-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Վերջին ծաղրածուն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2.000-4.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե ֆիզիկական անձի իրականացրած գործարքների նկատմամբ կիրառելի է ավելացված արժեքի հարկի շեմը, ապա ինչպե՞ս է որոշվում ԱԱՀ-ի պարտավորության մեծությունը:

Կարեն Մարտիրոսյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կ. Մարտիրոսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք՝ անհրաժեշտ է ղեկավարվել «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի դրույթներով, համաձայն որի՝ նշված գործարքների մասով ավելացված արժեքի հարկի պարտավորության մեծությունը որոշվում է՝

ա. գույքի մատակարարման կամ ծառայության մատուցման գործարքի ընդհանուր հարկվող շրջանառությունից, եթե անձի իրականացրած ապրանքի մատակարարման եւ (կամ) ծառայությունների մատուցման գործարքների ընդհանուր շրջանառությունը նախորդ տարում գերազանցել է ԱԱՀ-ի շեմը,

բ. գույքի մատակարարման կամ ծառայության մատուցման գործարքի ընդհանուր հարկվող շրջանառության եւ ընթացիկ տարվա սկզբից իրականացրած բոլոր գործարքների ընդհանուր հարկվող շրջանառության հանրագումարի ԱԱՀ-ի շեմը գերազանցող գումարից, եթե անձի իրականացրած՝ ապրանքի մատակարարման եւ (կամ) ծառայությունների մատուցման գործարքների ընդհանուր շրջանառությունը նախորդ տարում չի գերազանցել ԱԱՀ-ի շեմը:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ապրանքների աճուրդային վաճառքի դեպքում աճուրդի կազմակերպչի համար հարկվող շրջանառություն է համարվում վաճառվող ապրանքների սեփականատիրոջ (այլ անձի) կողմից միջնորդավճարի (պարգեւավճարի, տոկոսի եւ այլն) գումարը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է մերժվում ապոստիլի վավերացումը:

Անի Հարությունյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ փաստաթղթի վրա ապոստիլ դնելու դիմումը մերժվում է, եթե՝

ա. ներկայացված փաստաթուղթը չի բխում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներից,

բ. փաստաթուղթը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարի կողմից հաստատված՝ ապոստիլ դնելու կարգով սահմանված պահանջների խախտմամբ,

գ. դիմումում նշված է, որ փաստաթուղթն ուղարկվում է միայն Հաագայի կոնվենցիային չմիացած երկիր,

դ. փաստաթղթում առկա են չհաստատված ջնջումներ, փոփոխություններ կամ սխալներ,

ե. փաստաթղթի վրա ապոստիլ դնելու լիազորությունը նախարարությանը վերապահված չէ:

Նշված հիմքերով փաստաթղթի մերժումը կատարվում է այն նախարարություն մուտք լինելու օրվանից՝ մեկ օրվա ընթացքում: Փաստաթղթի վրա ապոստիլ դնելու դիմումը մերժվում է գրավոր: Դիմումի մերժման մեջ հստակ նշվում է մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապոստիլ դնելու դիմումի մերժման դեպքում մերժման պատասխանի հետ միասին դիմողին է վերադարձվում ապոստիլ դնելու համար ներկայացված փաստաթղթի իսկական օրինակը եւ պետական տուրքի վճարման անդորրագիրը: Դիմումի մերժումը օրենքով սահմանված կարգով կարող է բողոքարկվել դատարան:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Սերգեյ Փարաջանովի 100-ամյա հոբելյանի առթիվ Մոսկվայում Ռուսաստանի բանակի կենտրոնական տանը այսպիսի մեկնարկով է կայացել Parajanov-fest համառուսաստանյան փառատոնը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 3 + 7 +15 + 20
	Կոտայքի լեռներ	+ 4 + 7 +14 + 19
	Կոտայքի նախալեռներ	+11 + 13 +17 + 20
	Գեղարքունիք	+ 4 + 8 +14 + 17
	Լոռի	+ 6 + 10 +16 + 19
	Տավուշ	+ 8 + 13 +17 + 20
	Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +14 + 17
	Արագածոտնի նախալեռներ	+ 10+ 14 +18 + 20

	Արարատ	+ 13 + 15 +19 + 22
	Արմավիր	+ 12 + 14 +19 + 22
	Վայոց ձորի լեռներ	+ 6 + 8 +15 + 19
	Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 15 +19 + 22
	Սյունիքի հովիտներ	+ 16 + 18 +20 + 22
	Սյունիքի նախալեռներ	+ 8 + 11 +16 + 18
	ԼՂՀ	+ 8 + 10 +15 + 18
	Երեւան	+11 + 14 + 15 + 19

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*